



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

--- օգոստոսի 2017 թվականի №---Ա  
ք.Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 100  
ՏՈՒՆՈՒ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հուլիսի 13-ի «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության 2017 թվականի օգոստոսի 1-ի, ինչպես նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հուլիսի 18-ի №04-ԿՀ-05/2294, հուլիսի 26-ի №04-ԿՀ-01/2426 և օգոստոսի 1-ի №04-ԿՀ-01/2454 գրությունները, որոնցով վերջիններս խնդրել են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնությունը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից և Ասիական զարգացման բանկից վարկային միջոցներ ներգրավելու նպատակով, որպես ապահովման միջոց, ընկերության բաժնետոմսերի գրավադրման համար,

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի գրավադրման գործարքին համաձայնություն տալու մասին» №898Ա որոշումը,

գ) սույն որոշման «բ» կետում նշված որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի կողմից 2017 թվականի հուլիսի 31-ին Հայաստանի Հանրապետության կառավարության անունից ստորագրված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող՝ 246423 հատ սովորական բաժնետոմսերի գրավադրման պայմանների համաձայնությունը,

դ) «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության, «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության և «Կասկադ-Էներգացանց» սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերության միջև 2017 թվականի ապրիլի 13-ին կնքված համաձայնագիրը, որով «Կասկադ-Էներգացանց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համապարտ պատասխանատվություն է ստանձնել Հայաստանի Հանրապետության կառավարության և «Միդլենդ Ռեսուրսիս Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության միջև 2002 թվականի օգոստոսի 26-ին կնքված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վաճառքի պայմանագրից (հետագա բոլոր լրացումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության, «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության և «Կասկադ-Էներգացանց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2015 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված համաձայնագրից, «Էներգետիկայի մասին», «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներից բխող՝ «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության (գնորդի) և «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության (գնորդի) բոլոր պարտավորությունների համար,

ե) «Կասկադ-Էներգացանց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հուլիսի 31-ի գրությունը, համաձայն որի՝ վերջինս ընդունում է սույն որոշման «գ» կետում նշված համաձայնության պայմանները, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության ու «Միդլենդ Ռեսուրսիս Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության միջև 2002 թվականի օգոստոսի 26-ին կնքված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վաճառքի պայմանագրի 6.2 բաժինը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդ» ընկերությանը պատկանող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 30.000406 տոկոսը կազմող՝ 73927 հատ սովորական բաժնետոմսերը և «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 69,999594 տոկոսը կազմող՝ 172496 հատ սովորական բաժնետոմսերը (ընդամենը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող՝ 246423 հատ սովորական բաժնետոմսերը) Վերակառուցման և զարգացման եվրոպական և Ասիական զարգացման բանկերում գրավադրելուն:

2. Սահմանել, որ՝

- 1) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Ասիական զարգացման բանկի հետ կնքվելիք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող 246423 հատ սովորական բաժնետոմսերի գրավի պայմանագրերի համաձայն գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու կարգում պետք է ներառվեն պայմաններ, որոնցով կբացառվի բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը՝ առանց Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գրավոր համաձայնության,
- 2) սույն որոշումը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե ուժը կորցրած, չեղյալ, անվավեր, կամ վերացված է ճանաչվում, կամ կասեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի №898Ա որոշումը, որոշմամբ տրված համաձայնությունը կամ խախտվում է նշված որոշմամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի գրավադրման համար սահմանված պահանջներից կամ պայմաններից որևէ մեկը:

3. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող 246423 հատ սովորական բաժնետոմսերի գրավադրման գործարքի վերաբերյալ փաստաթղթերը (այդ թվում՝ պայմանագրեր, համաձայնագրեր, հավաստիացումներ) կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**